

Դեֆիլե՝ Նյուտոնի մահվան թիկնոցով

- Ընկեր Զյուպեյան... ընկեր Զյուպեյան... Չե՞ք լսում, ընկեր Զյուպեյան:

Քիմիայի ուսուցչուհի Նունե Զյուպեյանը արթնացավ տարօրինակ երագից և միաժամանակ սրբելով խորը քնի արդյունքում դնչի վրա հոսած թուքը՝ փորձեց վեր կենալ ճոճաթոռից:

55 տարեկան միայնակ կնոջ համար ամենաթանկ բանը իր տունն էր: Մաշված, մուգ կարմիր բազկաթոռները, բաց շագանակագույն փայտից ճոճաթոռը, հին կարի մեքենան, վարդագույն քարից բուխարին, մեծ գրապահարանը և հին մոսկովյան պատուհանագոգին դրված բույսերը տարեց կնոջ հետ միասին ստեղծում էին գեղեցիկ ռետրո տեսարան, որը շատ լուսանկարիչների ուշադրություն կգրավեր: Տիկին Զյուպեյանը շատ էր սիրում իր մասնագիտությունը, բայց տանել չէր կարողանում դեռահասներին, որոնց ստիպված դասավանդում էր: Վերջերս ի հայտ եկած վիրուսի պատճառով հայտարարված կարանտինը ուսուցչուհու սրտով էր: Ո՛չ մի դպրոց, ո՛չ մի անխելք պատանիներ ու ո՛չ մի զգվելի կոլեգաներ: Տիկին Զյուպեյանը համակարգիչ չունենալու պատրվակով նույնիսկ հեռավար դասընթացներին չէր մասնակցում: Աշակերտները վարպետ են ածականներ դնելու հարցում և տիկին Զյուպեյանին հաջողվել էր վաստակել “անհույս կույս” մականունը: Անձրևի կաթիլները, ուժեղ հարվածելով տան երկաթե կտուրին և պատուհաններին, խուլ ծափերի ձայներ էին արձակում: Ճաքճքված հին գրասեղանին դրված կիտրոնով թեյը գոլորշի էր արձակում բոցկլտացող խարույկի ֆոնին: Տիկին Զյուպեյանը խորը քնից արթնացած ու կկոցած աչքերով փորձում էր տարածքում պեղել իր ակնոցը:

- Տեր Աստված: Հինգ անց կես է: Թվում է՝ մի հավերժություն եմ քնել, բայց ընդամենը տասնհինգ րոպե է տևել: Գրողի տարած հեռուստացույցն էլ միացրած եմ թողել: Ամսվա վերջում հոսանքի գումարը սրտի վիրահատության գումարի չափ է հասնելու:

Հեռուստացույցը անջատելուց հետո ինտրովերտի համար հաճելի լռություն էր տիրում սենյակում, որը խախտում էր միայն խարույկի ճարձատուն ձայնը: Միայնակ կինը կյանքում առաջին անգամ զգաց հաճելի լռության տիրությունը: Նունեն գիտեր, որ ամեն ինչի մեղավորը հենց ինքն է, սակայն դա երբեք չէր խոստովանում:

Տիկին Նունեն սովորության համաձայն վերցրեց սառչող թեյի մոտ դրված գրիչը և սկսեց լուծել թվային խաչբառը, երբ նկատեց նորաձևության վերաբերյալ հետևյալ հարցը՝

“Նորաձևության ցուցադրություն”: Նունեի դեմքին հետաքրքիր ժպիտ հայտնվեց, որը կարծես մի քանի տարով երիտասարդացրեց նրան:

-Դե իհարկե՝ դեֆիլե, Դ-Ե-Ֆ-Ի-Լ-Ե:

Խաչբառը լրացնելու ընթացքում Նունեի գլխում իր անցյալից դրվագներն էին պտտվում՝ մեկը մյուսին հերթ չտալով: Նրա դեմքը հանկարծ մռայլվեց. թեպետ ջինսե հոլիդեյ տաբատն ու “Բիթլզ” պատկերով բլուզը վաղուց էր թաղել պահարանի ամենաներքին դարակում, բայց գրավիչ ու արկածախնդիր աղջկա պատկերը դուրս չէր գալիս նրա մտքից ու սրտից: Արդեն երեսուն տարի էր անցել, սակայն ամեն օր աչքի առաջ երևում էր սևահեր ու ամրակազմ երիտասարդի հեռացող սիլուետը: Շատ անգամ Նունեն ինքն էլ չէր նկատում, թե ինչպես է

գրուցում իր նախկին սիրո հետ: Ամեն անգամ Նուենն ինքն իրեն համոզում էր, որ չի կարողանում հիշել երիտասարդի անունը, բայց ենթագիտակցությունը բղավում էր գլխի ներսում: Անունը չէր հիշում, բայց ամեն անգամ լավանդայի իր մշտական օճառով լվացվելիս հապաղում էր, երկար տրորում ձեռքերը անուշաբույր փրփուրով, մոտեցնում քթին՝ ասես որսալու անանուն սիլուետի ներկայությունը: Իսկ տղայի նույնաբույր օճանելիքի սրվակը, թեպետ՝ վաղուց արդեն դատարկ, չէր նետում: Երբ նկատում էր, որ էլի հոտոտում է սև, ամրակազմ երիտասարդի ներկայությունը, բարկանում էր ինքն իր վրա, պարսավում իրեն անցյալի ուրվականներից ազատվելու իր անկամության համար: Անցյալի հիշողությունները մեծահասակ կնոջը հաճախ էին ստիպում օգտվել հանգստացնող հաբերներից: Բացելով լոգարանի պահարանը՝ տիկին Նուենն իր ամենօրյա հաբերների կողքին նկատեց կարմիր տուփիկը...

Եղանակը կտրուկ փոխեց իր մռայլ երանգները:

- Այ քեզ եղանակ: Ոնց որ մարտ ամիսը լինի, չնայած արդեն ամառ ենք մտնում: Անձրևի կաթիլների լռությանը հաջորդեցին պայծառ արևի շողերը, որոնք թափանցում էին պատուհանից՝ լուսավորելով հին գրապահարանը: Տիկին Նուենն մի պահ հայացքը նետեց դուրս, ապա մի քանի վայրկյան հետո նորից անցավ խաչքառ լրացնելուն:

“Սատանայի անունը”:

Տիկին Նուեննի մարմնով թեթև սարսուռ անցավ, սակայն չփոխվեց դեմքի արտահայտությունը: Հաջորդ հարցը՝ “Հարրի Փոթերի մահվան պարզաններից”, օֆ, ինքը իր հեքիաթները նրա համար չէր թաղել, որ սկսեր 21-րդ դարի հեքիաթներով ապրել: Խաչքառի հարցերից դժգոհ տիկին Նուենն մի կողմ դրեց այն և վերադարձավ դեպի ճոճաթոռը: Կնոջ դեմքը մի պահ հաճելի թեթևությունս ստացավ, իսկ մարմինը՝ ծանրություն: Միջավայրի գույները թանձրացան կնոջ աչքերում, իսկ աշխարհը նրան միևնույն դարձավ: Նրա անտարբերությունը ընդհատեց անտանելի տոթը, որը ստիպեց տարեց կնոջը հանգցնել խարույկը: Պատուհանից դեպի փողոց նայելով՝ նկատեց անսովոր դատարկություն: Տարվա բոլոր եղանակներին, ցանկացած իրավիճակում և նույնիսկ այս արտակարգ դրության պայմաններում այդ փողոցը երբեք դատարկ չէր եղել: Չկային նույնիսկ անցնոց-գնացող մեքենաներ:

Տիկին Զյուլպեյանը պատուհանի մոտ կանգնած մնաց մոտ հինգ րոպե, որպեսզի գոնե մի փոքր շարժ նկատելով՝ հանդարտեցներ իր մտավախությունները: Վաղուց չէր հետևել նոր ի հայտ եկած վիրուսի մասին իրադարձություններին, և այդ տարօրինակ լռությունը նրան ստիպեց կրկին միացնել հեռուստացույցը: Հեռուստացույցը միացնելն ուզարհուրելի պայթյունը մեկ եղավ: Տիկին Զյուլպեյանը վախից շարտեց հեռակառավարիչը: Երևի հեռուստացույցը միացնելու ժամանակ կայծակը անակնկալ կերպով հարվածել էր տան ալեհավաքին, ինչի արդյունքում պայթեց հեռուստացույցն ու անջատվեց տան էլեկտրակնությունը:

Սկսվեց ուժեղ ամպրոպը: Կատարվածից զարմացած և վախեցած տարեց կինը փորձեց փնտրել իր բջջային հեռախոսը: Նուեն Զյուլպեյանը միայն մի մարդու հեռախոսահամար ուներ իր՝ կոճակներով հեռախոսի մեջ՝ դա իր քրոջ համարն էր:

Կինը փորձեց միացնել իր հեռախոսը, սակայն փոքր սև էկրանը չլուսավորվեց: Տանը բացի բջջայինից չկար կապ հաստատելու ոչ մի հնարավորություն: Կինը բարկացած սեղանին նետեց համր հեռախոսը.

-Գրողի տարած դավաճան տեխնոլոգիա:

Եղանակը նորից կտրուկ լավացավ, սակայն դա երկար չտևեց: Երկինքը կտրուկ մաքրվեց սև ամպերից, կարծես անձրև չէր էլ եղել: Փողոցի ջրափոսերը սկսեցին գոլորշիանալ, և օդը սկսեց ծանրանալ:

Տիկին Նունեն հանեց իր բրոյա վերնաշապիկը, սակայն շոգը էլ ավելի էր խեղդում տարեց կնոջը: Նրա երեսին հայտնվեցին քրտիկների խոշոր կաթիլներ, որոնք խառնվեցին վախից առաջացած արցունքների հետ: Հարկավոր էր մի բան ձեռնարկել՝ օգնություն կանչել, գնալ մոտակա հիվանդանոց, խանութ կամ էլ ոստիկանություն: Զյուլայեյանը առանց վարանելու վազեց դեպի հնամաշ փայտե դուռը, սակայն որքան հրում էր այն, չէր բացվում: Դռան դիմաց էր ընկել կայծակից խփված կտուրի ավեհավաքը և ոչ մի կերպ տեղից չէր պոկվում: Միակ միջոցը պատուհանից դուրս գալն էր: Երբ փորձում էր արդեն իրականացնել մտածածը, եղանակը կրկին վատացավ:

Ահռելի ուժգին քամու սուլոցը մարդկային բղավոցներ էր հիշեցնում: Թվում էր, թե ուր որ է տան կտուրը կպոկվի: Հանգած բուխարու ածուխներից փոշի էր առաջացել: Նունեն վերցրեց քիչ առաջ հանած բրդե վերնաշապիկը և դրանով փակեց քիթ ու բերանը: Միայնակ կնոջ գլխում հանկարծակի միտք առկայծեց: Հյուրասենյակի մի պատը ընդհանուր էր հարևան տան պատի հետ, որտեղ ապրում էին Ալավերդիից եկած երկու ուսանողուհիներ:

Քամին համեմատաբար մեղմացավ, երբ Նունեն վերցրեց աթոռը և ամբողջ ուժով սկսեց հարվածել ընդհանուր պատին: Տիկնոջ ուժգին հարվածներից գրադարակի վրայից վայր ընկան հին հուշանվերները: Կնոջ ուժերը սպառվեցին, և նա վայր ընկավ հատակին ընկած վերնաշապիկի վրա: Մեկ րոպե չանցած՝ լսվեցին պատասխան հարվածներ: Իր ողջ կյանքի ընթացքում Նունե Զյուլայեյանը այդքան ուրախ չէր եղել մարդկային պատասխաններից:

- Լուսյա՛, լսո՛ւմ եք,- հազիվ հարևանուհիներից մեկի անունը հիշելով՝ բղավեց ուսուցչուհին:

Ի պատասխան լսվեցին մարդկային ձայներ, որոնց բովանդակությունը հազիվ էր հասկացվում:

- Ամոնիումի կարբոնատ,- մեխանիկորեն արտաբերելով՝ քիմիայի ուսուցչուհին վազեց խոհանոց և վերադարձավ հյուրասենյակ տարօրինակ սրվակներով և իրերով:

Հյուրասենյակի անկյունում դրված կարի մեքենայից հանեց ասեղը և վերադառնալով խոհանոցից բերած պարագաների մոտ սկսեց քիմիկոսներին ծանոթ աշխատանքը: Շատ չանցած՝ խառնուրդը տեղադրելով ընդհանուր պատի մոտ և այն այրելով, արագ վազեց դեպի խոհանոց պայթյունից պաշտպանվելու համար: Կինը փակեց ականջներն այնպես, որ պայթյունի ձայնն ավելի հեշտ բերանից կհասներ դեպի թմբկաթաղանթ, քան ականջներից:

Հանկարծ հատակը դողդաց: Նունեի ականջների մեջ տարօրինակ սուլոցն այնքան ուժգին էր, որ կնոջը մի պահ թվաց, թե կորցրել է լսողությունը:

Խոհանոցի պատուհանից դուրս նայեց, երկինքը կնոջը մանուշակագույն էր թվում:

Մի պահ սթափվելով ուժեղ պայթյունի հետևանքներից՝ Նունեն ծանրաքաշ կերպով վեր կացավ և գլուխը զգուշորեն մոտեցրեց հյուրասենյակի դռանը: Հյուրասենյակի մեջ փոշու մառախուղ էր կապել, հատակին ընկած գրքերն էլ կիսաայրված, կիսասևացած վիճակում էին: Ընդհանուր պատի վրա մեծ, անհարթ անցք էր բացվել, և այդտեղից լսվում էին հազի ձայներ: Նունեն, գնելով տեղանքը և համոզվելով, որ էլ վտանգ չկա, մոտեցավ պայթյունից առաջացած անցքին, սակայն նրան կանգնեցրեց զարհուրելի տեսարանը: Դատից այն կողմ, հարևանի տան հատակին ընկած էր ինչ-որ մեկի անգիտակից մարմինը:

- Լուսյա՞, - բարձրախոս ուսուցչուհու համար անսովոր կամաց շշնջալով՝ մոտեցավ անցքին:

- Խելագար, ապու՛շ, Ես ինչ արեցիր, կտոցրա՛ծ, - լացակումած ու խզված ձայնով լսվեցին կանացի ճիչեր:

- Լու՛սյա, - կրկին ավտոմատացված արտաբերեց կինը՝ գլուխը տանելով դեպի անցքը:

Անգիտակից մարմնի մոտ կիսանստած՝ կեղտոտ հագուստով ու դեմքով անհավասար շնչում էր մի աղջիկ: Նկատելով տարեց կնոջ գլուխը անցքի միջից՝ աղջկա աչքերը չռվեցին:

- Լու՛սյա, ի՞նչ Լուսյա: Յենց նոր սպանեցիր դու Լուսյային, հիմարի գլուխ, - միաժամանակ կատաղած, ալավերդու բարբառով արտաբերելով հետևյալ խոսքերը՝ աղջկը հարձակվեց Նունեի վրա՝ անկանոն հարվածներ հասցնելով: Կնոջը հաջողվեց հրել կատաղած աղջկան և ցատկելով հատակին ընկած մարմնի վրայով՝ վազել դեպի դուռը:

Փողոցում... Նկարագրիր միջավայրը , և կնոջ միտքը պարզացավ: Եղանակը անձրևային էր, սակայն առաջվա պես վտանգ չէր ներկայացնում: Փողոցում անցնող-գնացող մարդկանց ուշադրությունը գրավում էր կիսամերկ, գզգզված մազերով, կեղտոտ դեմքով կինը, ով օգնություններ բղավում:

Կինը օգնություն էր խնդրում, բայց միաժամանակ թույլ չէր տալիս, որ իրեն մոտենան՝ “վիրու՛սը, հիվանդ եք, ռիկետսիա, քլամիդիա, մոտիկ չգա՛ք”:

- Ընկեր Զյուլպեյյան... ընկեր Զյուլպեյյան... Չե՞ք լսում. ընկեր Զյուլպեյյան:

Զիմիայի ուսուցչուհի Նունե Զյուլպեյյանը արթնացավ տարօրինակ երագից և նկատելով սպիտակ առաստաղի ուժեղ լուսավորությունը՝ կրկին փակեց աչքերը:

- Լու՛մ եք, տիկին, դուք գտնվում եք հիվանդանոցում: Ձեզ հանգստացնող են ներարկել:

Տիկին Զյուլպեյյանը վերջապես բացեց աչքերն ու նայեց բուժաշխատողին .

- Ի՞նչ է եղել:

- Անալիզի արդյունքում ձեր արյան մեջ թմրանյութի առկայություն է նկատվել: Մնացածի մասին ես իրավունք չունեմ ձեզ հետ զրուցելու:

Բուժաշխատողը հեռացավ սենյակից՝ թողնելով ապշած կնոջը միայնակ: Զիչ հետո կինը, պոկելով թևին ամրացված կաթիլայինը, դժվարությամբ վեր կացավ մահճակալից և ճոճվելով մոտեցավ սենյակի պատուհանին:

-Ես ի՞նչ եղավ: Ու՞ր է ակնոցս:

Դուրս նայելով՝ կինը ներքևում նկատեց իր հարևանուհուն՝ Լուսյային: Բացելով սպիտակ պատուհանը՝ Նունե Զյուլպեյյանը մարմինը դուրս հանեց պատշգամբից:

-Լուսյա՞:

Անհավասար շնչառությամբ և անտանելի գլխապտույտով կնոջ գլխում հագարավոր մտքերի փոխարեն խաչբառի հարցերն էին պտտվում: Հանկարծ փոշտաց, քիթը խտրտացնում էր մանուշակագույն սուր բույրը, ասես հայտնվել էր լավանդայի հսկայական դաշտում, որտեղ ծաղիկների գորգի վրա սահում էր մի սև, ամրակազմ սիլուետ... Աչքերը մշուշվեցին, հիվանդասեյակի սպիտակ պատերին սև տառեր էին ուրվագծում:

-Ալբերտ, մահվան պարզևները երեքն էին: Երեքն էին, չէ՞, Ալբերտ: Վեց տառ, վզնո՞ց, ըրը, չէ, դիադե՛մ: ՉԷ, մեջտեղում “կ” կար:

Թ-Ի-Կ-Ն-Ո-Ց:

Նունեն կորցրեց հավասարակշռությունը և վայր ընկավ պալատի սառը հատակին: Նյութոնի դասական ճգողության տեսություն, դասական մեխանիկայի շրջանակներում գրավիտացիոն փոխազդեցությունը բացատրող օրենքը

հաստատվեց ևս մեկ անգամ. $F = G \frac{m_1 m_2}{r^2}$